ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12-ը ապրիլի 2019թ.
ժամը 12[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ռիստյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյանը,
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի պետ-գլխավոր զինվորական դիրիժոր, գնդապետ Ա. Պողոսյանը,
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի պետի տեղակալ, մայոր Տ. Ասատրյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Մ. Հոխեյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**երաժշտական գործիքների**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Տեսակենտրոն » ՍՊԸ
2	«Սարկիս Կազանչյան Ընդ Սանս» ՍՊԸ
3	«Հաշգա» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 . «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ. Հովսեյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.

- «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում է ընթացակարգի հրավերի N 2.1 հավելվածով /մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ/ ներկայացված աղյուսակի 2-րդ սյունակի՝ Հայրանունը, և 4-րդ սյունակի՝ Օտարերկրյա քաղաքացիների համար՝ համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հավաստող փաստաթղթի տեսակը:
- «Հաշգա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում է ընթացակարգի հրավերի N 2.1 հավելվածով /մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ/ ներկայացված աղյուսակի 2-րդ սյունակի՝ Հայրանունը, և 4-րդ սյունակի՝ Օտարերկրյա քաղաքացիների համար՝ համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հավաստող փաստաթղթի տեսակը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ին և «Հաշգա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չշտկեց վերոնշյալ անհամապատասխանությունները և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատեց անբավարար և մերժեց, իսկ «Հաշգա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկեց անհամապատասխանությունները և վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատվեց բավարար:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ. Հովսեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումները	*Նախնահաշվային գին /ՀՀ դրամ/*	«Տեսակենտրոն» ՍՊԸ-ի առաջարկած գին /ՀՀ դրամ/	«Սարկիս Կազանջյան Ընդ Սանս» ՍՊԸ-ի առաջարկած գին /ՀՀ դրամ/	«Հաշգա» ՍՊԸ ՍՊԸ-ի առաջարկած գին /ՀՀ դրամ/	1-ին տեղեր զբաղեցնող մասնակիցներ
1	Գալարափող «F/Bb»	*3 700 000*	1 970 000	3 670 000	2 018 000	«Տեսակենտրոն» ՍՊԸ
2	Փոքր թմբուկ	*4 500 000*	4 450 000	2 200 000	2 100 000	«Հաշգա» ՍՊԸ
3	Նոտաների ամրակալ	*800 000*	780 000	440 000	400 000	«Հաշգա» ՍՊԸ
4	Ֆլեյտա մեծ «C»	*5 000 000*	4 750 000	7 050 000	6 990 000	«Տեսակենտրոն» ՍՊԸ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Համաձայն ներկայացված գնային առաջարկների «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն, Սարկիս Կազանչյան Ընդ Սանս» ՍՊԸ-ն և «Հաշգա» ՍՊԸ-ն հարկվում են առանց ԱԱՀ:
3.3 Սույն ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 **22.04.2019թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին, և 4-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժիններում՝ «Հաշգա» ՍՊԸ-ն: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը և ընթացակարգի հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 12:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Գ. Ռիստյան
Գնահատող		Է. Համբարձումյան
Գնահատող		Ա. Պողոսյան
Գնահատող		Տ. Ասատրյան
Գնումները համակարգող՝		Մ. Հոխեյան